

Շ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ

Մատենադարանի տպագիր գրքերի քարտարանները վերնայելու ընթացքում նորից հայտնարերվեցին գրքեր¹, որոնք մրիայի են մատենագիտներ Ա. Ղազիկյանի, Գ. Զարպհանալյանի, Թեոդիկի և Գ. Լեռնյանի ուշադրությունից և դուրս են մնացել նրանց մատենագիտական ցանկերից։ Այս հաղորդման մեջ նկարագրված են 13 այդպիսի գրքեր, որոնք կարելի է բաժանել երեք խմբի։

Ա. 5 դիրք, որոնք տպագրվել են տարբեր քաղաքներում և տպարաններում, 1700-ից մինչև 1838 թթ.։

Բ. 4 դիրք, տպագրված Կ. Պոլսի մահտեսի Աստվածառուրի, նրա որդիների ու թոռների անունը կրող տպարանում, 1699 մինչև 1810 թթ.։

Գ. Հնդկաստանի Կալկաթա քաղաքում 19-րդ դարի առաջին քառորդում գործող Ավետ Զնթլումյանի տպարանում տպագրված 4 գիրք և հավելյալ 3 գիրք, նույնպես տպագրված այդ նույն տպարանում, որոնց մասին տեղեկություններ կան նույն տպարանում տպված և սույն հաղորդման մեջ նկարագրված ռժամագիրք համառոտ վասն մանկանց գրքում Ավետ Զնթլումյանի թողած հիշատակարանից։

1.

(Հնատիպ գրքերի հավաքածու № 1072)

ՀԱՄԱԾՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ /Տնօրինականաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի/ որ ի սուրբ քաղաքն երուսաղէմ/ Այլ և թուղթն սիրոյ և միաբանութեան /Կոստանդիանոսի և Տրդատայ թա/գաւորաց և որբոցն Սեղբես/տրոսի և Գրիգորի Լուսաւորչին/ մերոյ: /Տպեցեալ արդեամբը և գոյիւր/ եղիացի Արհի հայիսկոպոսի /թեթէհէմի: սրբոյ այրին/: Յամի տեառն ՌԶ և Հայոց ՌՃիթ [1700] յուլիսի իէ (27): Ի Վէնէտիկ:

88 զարդափակ էջեր. $16 \times 11 \times 1$ սմ. շափի, կաշեպատ տախտակե կազմ. կազմի աստաղը մետաքսե գունավոր կտոր: Յուրաքանչյուր կողմից 2-ական թերթ պահպանակ: Փորագրություններ 2, 6, 25, 44 էջերին: Լուսանցազարդեր չ, 37, 41, 45, 83 էջերին: Վերջազարդեր 42, 43 էջերին: Զարդագրեր 3, 37, 41, 45, 83, 85, 86 էջերին: Գրաշարազարդեր: Շարվածքի շափը $12 \times 7,5$ սմ:

Բովանդակություն.— Այսոքիկ են տեղիք ամենայն տնօրինականաց Տեառն մերոյ յիսուսի քրիստոսի, որ ի սուրբ և աստուծարնակ մայրաքա-

¹ Տե՛ս «Մատենագիտական նորույթներ» խորագրով մեր առաջին հաղորդումը, տպագրված «Բաներեր Մատենադարանի», № 4, էջ 425—436:

դաքն Երուսաղէմ, որք կան ի միջի և արտաքոյ նորին։ Խրատ համառօտարար Յաղագս այնոցիկ, որք տան Երկրպագութիւն սրբոց տնօրինականաց... որ ի սուրբ Երուսաղէմ։ Տաղ ասացեալ յակոր քահանայէ ի վերայ սուրբ քաղաքին Երուսաղէմի։ Տաղ սրբոյն յակորայ առաքելոյն որդւոյն զերեթեայ։ Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սրբոյն Սեղբեստրոսի վեհագունի փափին և Տրդատայ Հայոց լուսաւորչին... Տաղ ծննդեան։ Տաղ շրօրհնեացն։ Տաղ յարութեան։

Գրքի մեջ շի նշված տպարանի անունը։ Տառաձեերից ու տպագարդերից դատելով կարելի է ենթադրել, որ հրատարակվել է Նահապետ Գուլնազարյանի տպարանում, որտեղ ըստ թեոդիկի, 1687 թ. տպագրված է միայն Հովհաննես Կոստանդնուպոլիսու «Պարզաբանութիւն հոգինուագ սաղմոսացն Պատթի մարգարէին» դիրքը։

2.

(Հնատիպ գրքերի հայտաձու № 24)

Գիրք ՏՕՄԱՐԱՑ /Հայոց և Հոօմայեցոց/ ընդ որս և պարզատօմար և լուսնացոյց. և այլ բանք /լոյժ պիտանիք. ընդ/ որս և Կաղանդացոյց. /և Հարցմունք սրբոյն/ Գրիգորի մերոյ Լուսալորշին. և տեսիլ սուրբ/ Աստուածածնայ, զոր ետես ի /լեառն ձիթենեաց. եւ/ հարցմունք սրբոյն Բարսեղի կեսարացոյ/։ Ի թուին Հայոց Աճշտականը [1738]։

(16), 17—162, 175—176, 181—188, 225—250, 261—272 էջ։ 11×8×2 սմ շափի։ Գրոշմազարդ կաշեպատ տախտակե հնացած կազմ։ Ծեստավրացիայի ենթարկած դիրք։ Փորագրված կիսախորան 3-րդ էջին։ Զարդագրեր 3, 39, 56, 140 էջերին։ Վերջազարդ 239 էջին։ Հիշագիր շի դրված սկզբի 16, 19, 20, 21, 23—28, 31, 185, 237 էջերին։ Շարվածքի շափի 8,5×6 սմ։

Բովանդակություն. — Տօմար Հայոց։ Տօմար Հոօմայեցոց։ Պարզատօմար ըստ Հոօմայեցոց։ Վասն եօթն մոլորականացն և կաղանդացոյցն։ Տեսիլ սուրբ Աստուածածնին։

Օրինակի առանձնահատկությունը. — Ակորդի 16 էջերը էջակալված շնչ էջակալությունը սկսվում է 17 էջից։ Վերջից պակասում են թերթեր։

Մանորություն. — Վերջերս Հայկ. ԱՍԻ. Պետ. գրադարանի աշխատակից Ռ. Եշխանյանը մեր հնատիպ գրքերը նայելիս նկատեց, որ 1643 Համարը կրող Տօմարը նույն հրատարակությունն է, ինչ որ սույն՝ 24 համար կրողը։ 1643 համար կրողը շումի տիտղոսաթերթ, սկսվում է 10-րդ էջից։ Գրքի միջից պակաս են 28—195 էջերը, վերջանուած է 442 էջով՝ մեջընդմեջ թերթի։

Իսկ 24 համար կրողը, ինչպես տեսանք գրքի նկարագրությունից, ունի տիտղոսաթերթ, տեքստը սկսվում է 1-ից և վերջանուած է 272 էջով։ Կոպիտ տասած, մեկի սկիզբը դոյլություն ունի, մյոււս՝ վերջը, որի հետևանքով բռվանդակություններն էլ տարրեր են։ 1643-ի բռվանդակությունը հետևյալն է։ Տօմար Հայոց։ Տօմար Հոօմայեցոց։ Պարզատօմար ըստ Հոօմայեցոց։ Վասն եօթն մոլորակացն և կաղանդացոյցն։ Հարցմունք սրբոյն Բարսեղի կեսարացոյ և պատասխանիք եղորդ իրոյ սրբոյն Գրիգորի։ Յանկ գրքոյ։ Յիշատակարան Տպողի։ Իգնատիոսի արարեալ մարմնախաղաց փորձիւ։ Լուսնացոյց և երազացոյց։

երազահան վոր ասացեալ է Դանիէլ Մարգարէն: Յաղագս շարժմանց որ են ցուցակ: Յաղագս շարժմանց հողմոց և ծովու: 304 էջի վրա տպագրված է «Յիշատակարան տպողի»: Էջը վերջանում է «վերջ» բառով: Սակայն ըստ երևույթին դրի տպագրությունը այսաեղ դադարեցվել է, ճետո նորից շարունակվել: 303 և 304 էջերը կրկնված են: Ըստ որում 303 էջի վերևի կեսը նույն է, ինչ որ նախորդ 303 էջի վրայինը, իսկ երկրորդ կեսին «Յանկ»-ի փոխարեն տպագրել են «Իգնատիոսը»: Այդաեղից պապագրությունը շարունակվել է:

304 էջի վրա եղած հիշատակարանի շնորհիվ իմանում ենք, որ գիրքը տպագրված է Ղաղար կաթողիկոսի օրոք և Արքահամի տպարանում: «Եւարտեցաւ գրկութս որ կոչի բոն տօմար հայոց բարեխօսութեամբ սրբոյն Սարգսի զօրավարին: Ի հայրապետութեան տեառն Ղաղարու սրբազն կաթողիկոսին... Արդ որք օգտիք սովաւ կարդալով լիշեցէք զնուաստ Արքահամս և ղղոթ առօդսն զխոյեցի իգնատիոսն և ղԱնտօնն»:

Երկու օրինակների միջև ընդհանուր են՝ 5—14, 21—22, 225—250, 261—272 էջերը: Մնացած էջերով մեկը լրացնում է մյուսին:

3.

(Հնատիպ գրքերի հավաքածու № 1216)

ՃԱՇՈՅ ԳԻՐՔ ՓՈՋՐԱ/ԳՈՒՆԵՂ: /Արտահանեալ ի մեծ ճաշոցէ գեղեցկա/ տիպ և վայելուշ դադարեցելոյ ի մատենից /հնոց թագաւորացն հայոց յաղագս եկեղեց/ ցական դպրոց: /Զի յառաջազոյն ասացեալ վերահասուէ լինիցին զգուշացնալ ուղիղ ընթերցման ի /յատեան եկեղեցու առաջի մեծամեծաց/ այսինքն, եպիսկոպոսաց և վարդապետաց: Քահանայից և ժողովրդոց: /Ռատի պարտնակէ սա լինքեան ի բոլոր/ տարուց զբնթերցուածու համայնս դպրաց /որ ի ժամ պատարագի, այսինքն զերդ երդոցին. /զԱռակացն. զՄարդարէիցն, զԱռաքելոցն /գործոց, զՊօղոսի թուղթն և Կաթուղիկեացն. և զԱղուհացից զերեկոեան /գրեանսըն բոլոր: /Տպեցեալ արդեամբք և գոյիւր տպագրողի / ի փառս քրիստոսի և ամենօրհնեալ մօր նորին: / Ի հայրապետութեան տեառն Ղաղարու սրբազն և աստուածաբան Կաթողիկոսին: /Եւ ի պատրիարքութեան սրբոյ երուսաղէմի նորապսակի տեառն Յակօրայ արհի և Աստուածաբան վարդապետի /իսկ Կոստանդնուպոլսոյ պատրիարք Տեառն Մինասյ արհի և աստուածաբան վարդապետի: /Ի թուին հայոց (1198), [1749] մայիսի ին [25]:

812 զարդապիակ, երկայուն էջեր, փայտյա թավշապատ կաղմով. 21×15 ×6 սմ շափի: Փորագրություններ 2, 224, 328, 352, 385, 400, 407, 430, 476, 548, 598, 688, 811 էջերին: Նախազարդեր 353, 386, 477, 549 էջերին: Լուսանցաղարդեր 12, 19, 353, 386, 407, 477, 549, 599 էջերին: Վերջազարդեր 11, 407 էջերին: Տպարանաղարդեր 74, 105, 249, 361, 599, 773, 782 էջերին: Հիշադիր շկա բազմաթիվ էջերին: Զարդապրեր (ալրք. կարգով) Ա, Բ, Գ; Ե, Զ, Ը, Թ, Խ, Ը, Կ, Հ, Ձ, Մ, Յ, Ռ, Ռ, Վ, Շ, Տ, Ց, Ֆ, Չ: Շարվածքի շափը 17×11 սմ:

Օրինակի առանձնահատկություններ.— 3—8 էջերը գրված են ձեռագրով: Պակասում են 11—14 էջերը:

Հրատարակության պատմությունը.— Ճաշոց փոքրադունեղը համառո-

տությունն է մեծ ճաշոցից, «Արտահանեալ ի մեծ ճաշոցէ»։ Տպագրվել է Կոստանդնուպոլիսում, Մարտիրոս դպրի տպարանում, իրեն իսկ «արդեամբք և դոյլիւք»։ Տպադրիլ Մարտիրոսը դրքի հիշատակարանի մեջ գրում է, «...Եղեւ աւարտ ճաշոց պրքիս հին և նոր կտակարանացն աստուծոյ...»։ Ի թուիս մերոյ (1199), [1750] ի մայիսի երեք...։ Արդ որք ընթեռնոյք զսա, յիշեցիք դհանգուցեալ ծնօղն իմ զմահտեսի Սարգիսն, և զմայրն իմ զՍիմայն և զեղրայրն իմ զԴէորքն... նաև յիշեսչիք զշնչին և զանպիտան ծառայս ձեր զՄարտիրոս դպիրու։ Եւ զսիրելի որդեակն իմ զՏիրացու Սերոբէն, որ ի գործ շարաբարդութեան կապառեայ տառիցն և ցրմանց նոցին զցայդ և զցերեկ միայնակ՝ ոչ սակաւ կրեաց զաշխատանս...»։

4.

(Հայերեն գրեւերի հակաֆածու № 28713)

Գիրք /Պատմոթեան/ Սրբոյ և մեծի Քաղաքիս աստուծոյ Երուսաղէմիս և սրբոց Տնօրինականաց յՏեղեաց Տեղեաց Տեառն մերոյ/ Յիսուսի Քրիստոսի Կոստանդնուպոլիս,, ի Տպարանի մայր դպրատամ։ Յամի Տեառն, 1807 և ի թուին հայոց ԽՄԾԶ։

353 զարդափակ էջեր. կաշեպատ ստվարաթղթե կազմ. կազմի աստառ գունազարդ թուղթ, 1թ սպիտակ թղթե պահպանակ։ Մեծություն $20 \times 14 \times 2$ սմ. Փորագրություններ տիտղ. թերթի վրա և 8, 9 էջերին։ Բազմաթիվ դարդագրեր։ Վերջազարդեր 34, 63, 162, 178, 184, 221, 258, 280, 281, 309, 323 էջերին։ Լուսանցազարդ 9-րդ էջին։ Հիշարառ լի դրված 35, 67, 98, 103, 116, 199, 211, 219, 275, 337 էջերին։ Շարվածքի շափը 16×10 սմ։

Հրատարակություն — 4-րդ։

Հեղինակ — Հովհաննես Հաննա.

Բովանդակություն.— Երուսաղեմ քաղաքի և սրբավայրերի նկարագրությունը և պատմությունը։ Տաղք, օրհնութիւնք — ներբողեանք նվիրված Երուսաղեմ քաղաքին։

Հրատարակության պատմությունը.— Դրքի հիշատակարանում նախապես տրված է 2-րդ և 3-րդ հրատարակությունների պատմությունը, իսկ սույն 4-րդ հրատարակության մասին հետեւյալն է ասված... «... ի սպառիլ և ի վերջանալ երրորդի տպագրութեան պատմագրքոյս այսորիկ՝ վերստին հրամանաւ և արդեամբ իսկ արժանաժառանդ սրբազան պատրիարքի սրբոյ Տնօրինական Տեղեաց Տեառն թէոդորոսի... արքեպիսկոպոսի՝ եղեւ այս շորորոդ տպագրութիւն գրքոյս։ ... Արդ ի վայելելն զսա, և ի հրճվիլն ձեր հոգևորական պատմութեամբ սրբոց տնօրինականաց տեղեացն Քրիստոսի. յիշեսչիք զպատրաստական ծառայ ձեր զտպագրիլ տիրացու Մարտիրոս զշարօդ և զցրուող գրոցս... Յամի տեառն 1807 և ի թուին հայոց ԽՄ ի ձեռն Տպագրիլ Մարտիրոսի»։

5.

(Հայերեն գրեւերի հակաֆածու № 8749)

ԽՈՐՃՐԴԱՏԵՏՐ յՄԲԱԶԱՆ ՊԱՏԱ/ՐԱԳԻ/ Ըստ արարողության Եկեղեցեաց Հայաստանից։ /Ի Հայրապետութեան Տեառն ՅՈՎՃԱՆ/ՆՈՒ Արժանընտիր կաթուղիկոսի Ամենայն հայոց և ասպետի։ /Հրամանաւ Տեառն Աստու-

ածարեալ Ա/ռաքելաշաւիդ վիճակաւոր Առաջնորդի և մետրապօլիտի հայոց Ղարաբաղաց և ազգոց: Տեսն ՊԱՂՏԱՍԱՐԱՅԻ իշխանազնի Հասան Զալա/լեան Սրբազն Արք եպիսկոպոսի /և Ասպետի/: Ի թուականութեանս /1838 ՌՄՁէ: /Ի տպարանի նորին բարձր /Սրբազնութեան/: Ի ՇՈՒՇԻ:

26 երկայուն գծափակ էշեր, $27,5 \times 19,5 \times 1$ շափի: 4 էշին գրաշարազարդերով ձեւավորված խաչ: Հիշագիր չի նշված ոչ մի էշի վրա: Եարվածքի շափը 21×14 սմ:

Հրատարակություն.— 21-րդ:

Բովանդակություն.— Օրէնք արկանելոյ սպաս եկեղեցոյ: Աղօթք Առանձնական Պատարագիշ Քահանային: Հաւատամք ի մի Աստուած. Տէր Աստուած զօրութեանց... Յիշատակարան սրբոյ մատենիս:

Հրատարակություն.— Դրբի Հրատարակության մասին հիշատակարանում գրված է. «Արդ՝ որովհետև Աստուածային մատենիս այսորիկ տուազին տպագրեալքն էին մաշեալք և սպառեալք, վասն որոյ՝ ...երջանիկ հայրն... Գանձասարաց Պաղպասար մետրապօլիտ... իւրով արդեամբն ետք երստին տպել...»:

Ծանոթություն.— Ա. Ղազիկյանը իր «Հայկ. նոր մատենագիտ.», «Խորհրդատեար» հատվածի տակ 20-րդ հրատարակությունը համարում է Վենետիկում 1832 թ. տպագրված հայերին-իտալերեն լեզուներով խորհրդատեարը: 21-րդ՝ համարում է 1854 թվի տպագրությունը նույն տեղում: Խոկ Շուշիի 1838 տպագրությունը չի նշել (էջ՝ 1166): Մենք իրավամբ Շուշիի այս հրատարակությունը համարում ենք 21-րդ: Թեոդիկը Շուշիում տպագրված գրքերի ցանկը ժամանակագրական կարգով: Այս խորհրդատեարը չի մտել այդ ցանկի մեջ (էջ 183): Լեռնյանը «Հայոցիրքը և տպագր. արվեստը» (Ե. 1958) գրքի մեջ կանգ առնելով Շուշիի տպարանի վրա, հիշատակում է 1837 թ. տպված «Շիլիոնի կալանավորը» և 1839 թ. տպված Հասան Զալալյանի «Աղուանից պատմութիւն»: 1838 թ. տպագրված այս «խորհրդատեարը» բաց է թողնված (էջ 229):

ՄԱՀՏԵՍԻ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐ

6.

(Հնատիպ գրքերի հավաքածու, № 1682)

ՇՆՈՐՀԱՐ ԱՄԵՆԱ/ԶՈՐԻՆ ԱՍՏՈՒՇՈՅ ԵՒ /ՌԴՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ/ մերոյ Յիսուսի Քրիստոսի և յօժանդակութեամբ Հոգուոյն լորոյ պարզեատոի. Ըսկիզբն եղաք երաժշտական երգու Շարականաց. գեղեցիկ յօրինեալ ի/ սրբոց մերոց վարդապետաց. ի լուսաւորութիւն և /ի պայծառութիւն եկեղեցեաց Հայատանեաց: յիստ աւորց պատշաճին ըզաէրունեացն և ըդ/սրբոցն զօրհնութիւնն. քաղուածովք եղաք զի մի /ոք աշխատեսցի որոնել. նայ և զգիշերապաշտօնն/ Զոկրունեացն և զմարտիրուացն և զաւոր /պատշաճն իւր սարօքն եղաք/ կարդաւ: /ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն եղմիածնի/ Տեսն Նահապետի Սրբազն Կաթուղիկոսին: /Եւ Սուրբ Երուսաղեմայ Հայուապետին Տէր/ Մինասին: /Եւ տպագրեցեալ ի տպարանի Ըստամոլոցի խօճայ Կարապետի որդի Տիրացու/ Աստուածատուրին: /Արդեամբք եւ գոյիւր նոյնոյ: Ըստամալոցի/ Տիրացու Աստուածատուրին: Եւ կեսարացի /Սարդիսին. որ մականուամը

ծառայ կոչի: /ի թուականութեանս Հայոց. ՌՃԽԸ (1699): /Սեպտեմբեր ամսոյ ձԱ [11]: /ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս: /Օգնեա Հոգիտ Սուրբ Աստուած Տշմարիտ. զսկսեալս /մեր զու հասոյ յաւարտի:

527,1 զարդափակ երկսյուն էջեր. $25 \times 18 \times 6,5$ սմ — շափի, կաշեպատ տախտակե դրոշմաղարդ կազմ. կազմի 2-րդ կողի դարձերեսին դաճած կտոր: Փորագրություններ 4, 18, 47, 89, 206, 288 էջերին: Կիսախորաններ 5, 18, 90, 207, 289, 366, 446, 486 էջերին: Նախաղարդեր 172, 227, 466, 502 էջերին. վերջազարդ ձեռքով նկարած 3, 171 էջերին. լուսանցաղարդեր բաղմաթիվ էջերի վրա: Զարդագրեր (թոշնագրեր) (այրք. կարգով) Ա, Գ, Դ, Ե, Զ, Թ, Ի, Լ, Խ, Ս, Հ, Ճ, Մ, Յ, Շ, Ո, Պ, Վ, Ց, Ք, Օ: Գրաշարաղարդեր: Հիշաղիր չկա 27 էջին: Շարվածքի շափը 20×14 սմ:

Թովանդակուրյուն.— Նըշանակութիւն երգողաց զշարականն: Շարակնոց: անկ բաղուածու Շարակնոցիս: Վասն անունց յօրինողաց զշարականս, որք սկսեալք եղեն ի թուոյն Քրիստոսի և այլք ի մերում թուոյ: Անուանք խաղից շարականց: Վասն սկսանելոյ ձայնից շարականց: Ֆիշատակարան:

Մրինակի առանձնանիատկուրյուններ.— Գրքի 3-րդ էջի վրա երեք տարբեր անձնավորությունների կնիքների դրոշմանիշեր կան. Հավանարար աբն անձանց, սրոնց հաջորդաբար պատկանելիս է եղել զիրքը: 82—83 էջերի միջին ներդրված ևն 4 թերթ ձեռագիր շարականներ վերնադրված «շարական նորագիւտ սրբոյն Գէորգայ զօրավարին» և «շարական նորագիւտ սրբոց առաքելոցն Թաթէոսի և Բարդողիմոսի»: 4-րդ թերթը՝ մաքուր:

Հրատարակուրյան պատմորյունը.— Ինչպես նշված է տիտղոսաթերթի վրա, զիրքը տպագրվել է Կ. Պոլսում տիրացու Աստուածատուրի տպարանում ՌՃԽԸ (1699) թվականին, հենց իրեն՝ տպարանատիրոջ և կիսարացի Սարգսի ծախքով:

Մինչև օրս մեր մատենագետների մոտ այն կարծիքն է տարածված, որ տիրացու Աստուածատուրի, կամ ինչպես ինքն է իրեն անվանում՝ տրուալ մահտեսի Աստուածատուրի կամ Աստուածատուր Ապուշեխցու տպարանը Կ. Պոլսում հիմնադրվել է 1700 թվականին:

Մեր ձեռքի տակ գտնվող սույն Շարակնոցի տպագրությունը սակայն սկսվել է 1699 թվականից և ավարտվել է 1700 թվականին: Գրքի ավարտման մասին հիշատակարանի մեջ կարդում ենք. «Ընորհօք և ողորմութեամբ տեառն մերոյ... յանդ ելիալ աւարտեցաւ տառս երաժշտական, որ և կոչի ձայնգաղ Շարակնոց: Ի թուականիս Հայոց ՌՃԽԸ (1700), օգոստոսի ֆե (15) ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս...» (526 էջի դարձերես): Իսկ «Գիրք աղօթից»-ի տպագրությունը սկսվել է Ռէ՛ (1700) թվի մարտի 20-ից (ըստ տիտղոսաթերթի) և ավարտվել է 1702 թվի մայիսի 5-ին, ինչպես այդ կարդում ենք նարեկի հիշատակարանում. «Եւ եղեւ յաւարտ տպագրութեանս սրբոյ մատենիս ի թուոյ փրկչին ՌԶԲ և Հայոց ՌՃԽԸ, ամսեանն մայսի Ե...» (էջ ՀՇԱ-րդաբերես):

Ուրեմն այդ տպարանի առաջին արգասիքը պետք է համարենք այս Շարակնոցը և ոչ թե Նարեկը և տպարանի պատմությունը պետք է սկսել ոչ թե 1700, այլ 1699 թվականից:

Գրքի տպագրությանը մեծ մասնակցություն է ցուց տվել Կեսարացի Սարգիսը ոչ միայն նյութական օժանդակությամբ, այլև գրքի շարելու, սրբագրելու գործում: Հիշատակարանի մեջ նրա մասին կարդում ենք. «Արդ դարձե-

WILLIAM C. WILSON
COUNSELOR-AT-LAW

卷之三十一

卷之三十一

Արց աճ մին և յօշ պատրիս քետամը հոգ ու ցուց
սպաս սպարկ և առանքի վահանակը և անդ ու եղած շատ
կատ երդու և պատրիս աճ եղացին յարինեալ ի
որդու մերց ըստ բարձրագույնը և իսկ առ որդին ե
ի պատրիս թագավոր եկեղեցեւոց հայաստանաց
առ առաջ այս պատրիսին ըստ երդու առաջ և ըստ
արքու պատրիս թագավոր առաջ և աստ ու ու երդու զի մի
ու պատրիս առաջ առաջ և զի թագավոր պատրիս առ
և աստ ու ու երդու և զի պատրիս առ և զի առ

Digitized by srujanika@gmail.com

Ա Տաղապետ ԲԵ Արք Մ Բայազին Հ Յանձնի
Տեսն Ե աշակերի Արքայա Կաթողիկոսութեա
ւ Ա Արք Ե րաւագանց Հ այրագարեն ՏԵ
Բ Բայազին :

U.S. Standard

Հաւ տպագրեցին ի ուստարածի Շատամազը
կանց Արքապետով ուղարի Տիրացու.

Digitized by srujanika@gmail.com

() զ ներած աղջութակ է ի համար այս պատճեալու

1699 թ. Մահմեսի Աստվածառուրի տպարանում տպագրված
Շարակնոցի տիտղոսաթիրթը

ալ աղաշեմ լիշեցէք ևս նուաստս յամենից զՄարգիսս զի կարի յոյժ աշխատեցա ի շարելն և ի սրբագրելն զի ամենեմն Ռոկան վարդապետին շինած քաղուածուի վերա. իւր շինած շարակնոցի վերա շարեցի...»¹: Գրքի տպագրության վրա աշխատել են տպարանի աշխատակիցներ «զտէր Ղազարն... զի կարի յոյժ աշխատեցաւ ի սրբագրութեան սորին...: Այլ և լիշեսչիք զաշխատաւրս սորին զթութերն և զՄիքայէլն և զԵղեայն... զի կարի յոյժ աշխատեցան և դուք լիշեալ լիշիք...»:

Մանորություն.— Այս Շարակնոցը ստացվել է Քիշնև քաղաքի Հայոց եկեղեցուց Մատենադարանի աշխատակից Յ. Պողոսյանի միջոցով, ուր նա գործուղվել էր 1959 թ. նոյեմբերին: Բերած Հայերեն բազմաթիվ հին գրքերի միջից Հայտնաբերվեց այս Շարակնոցը, որը նորություն էր մեր գրադարանի համար: Այդ գրքից չկա նաև Պետ. գրադարանի հաղվագյուտ և անձեռնմխելի գրքերի հավաքածուում: Գիրքը այժմ պահպանվում է Մատենադարանի հնատիպ գրքերի հավաքածուում 1682 համարի տակ:

7.

(Հնատիպ գրքերի հավաքածու № 1258)

ԵՐԱԺԾԱԿԱՆ /ԵՐԳԵՑՄՈՒԽ/ ՀԱԳԵԲՈՐԱԿԱՆԻՔ յԱՍՏՈՒԱԺԱՆՈց և երջանկաց սրբոց վարդապետաց Հայոց թարգմանչաց, ի լույսաւորութիւն և ի պայծառութիւն Եկեղեցեաց Հայաստանեաց: Ըստ աւորց /պատշաճին դտէրունեացըն և զսրոցն/ զօրհնութիւնն քաղուածուվք եղաք /զի մի ոք աշխատեցի որոնել, նայ և/ զգիշերապաշտօնն Զտէրունեացն /և զմարտիրհսացն և զաւու պատշաճ/սըն իւր սարօքն եղաք կարդաւ: /ի թուականիս, ՈՃ29 [1724]: Յունուարի ա/ի տպարանի տրուալ Աստուածատրոյ:

528 երկսյուն, զարդափակ էջեր, կաշեսպատ, գրոշմազարդ փայտե կաղմով, $24 \times 18 \times 6$ սմ շափի: Փորագրություններ 4, 18, 46, 206, 288 էջերի վրա: Լուսանցաղարդեր կան բազմաթիվ էջերի վրա, նախազարդեր՝ 5, 90, 172, 207, 227, 289, 366, 446, 486, 502 էջերի, վերջաղարդեր՝ 3, 89 էջերի վրա: Զարդառառեր և թոշնագրեր (այլր. կարգով) Ա, Բ, Գ, Ե, Զ, Թ, Ժ, Լ, Զ, Ճ, Յ, Ռ, Պ, Ս, Ռ, Ց, Օ, Փ: Շարվածքի շափո՝ 20×14 սմ:

Հշատարակություն.— Երդ:

Օրինակի առանձնահատկություններ.— 46 էջից հետո էջակալությունը ընդհատվում է և շարունակություն կազմող 3 էջերի վրա զետեղված է «Զրուցեալ մեծացուացէքն յամէն ձայնից եղաք աստ կարգաւ» ձանոթությունը, որից հետո տեքստը 47 էջից շարունակվում է: Գիրքը տպագրված է երկսյուն և շարականները ձայնագրված են հայկական խալերով:

Բովանդակություն.— Նշանակութիւն երգողաց Զշարականն: Վասն անուանց յորինողաց զշարականս, որը սկսեալը եղեն ի թրոյն Քրիստոսի և այլը ի մերում թրոյ, Անուանք խաղից շարականաց: Վասն սկսաննելոյ ձայնից շա-

¹ Ակնարկում է Ամստերդամում 1664 թվականին Ռոկանի Ռուանցու տպարանում տպարված Շարակնոցը:

բականաց: Շարականներ: Ցանկ շարականիս: Տեառն ներսէսի կաթուղիկոսի Ասացեալ վասն առ ի Քրիստոս ննջեցելոց: Ցանկ քաղուածու Շարականիս: Յիշատակարան:

Հշատարակության պատմությունը.— Գրքի հիշատակարանի մեջ կարդում ենք. «Երդեամբը և դոյիւր անդամչեցի Աստուածատուրի որդի մահտեսի Ղարախանն և ազուլեցի ալ. Սարդիսի որդի պ. Յարութիւն, և ըստամպօլցի պ. Դանէլի որդի տիրացու Մովսէսն, դարձեալ ըստամբօլցի պ. Կարապետի որդի մահտեսի Գրիգորն, և շորից բարեպաշտիցն խորհուրդ արարեալ և ետու տպագրել զմատեանս դայս: Ի տպարանի պ. Կարապետի որդի տրուալ Աստուածատուրի»:

8.

(Հնատիպ գրեւերի հավաքածու № 959)

ԱԻԵՏԱ/ՐԱՆ /Տեառն մերոյ /Յիսուսի Քրիստոսի/. Տպեալ Հրամանա: Տեառն Զաքարիայ ալգասէր /և բարեկարգ Պատրիարքի: /ի Կոստանդնուպօլիս: /Յամի Տեառն 1796/: Եւ Հայոց ՌՄԽե: /ի Տոլարանի Աստուածատուրի:

364 զարդափակ երկսյուն էջեր, կարմիր գույնի կաշեպատ, դրոշմազարդ փայտե կաղմ. 4 թ. պահպանակ, $26 \times 19 \times 4$ սմ շափի, կաղմի տակ գուն. թուղթ: Փորագրություններ կան 18, 24, 45, 68, 82, 94, 110, 112, 114, 120, 186, 190, 195, 202, 284, 286, 290, նախազարդեր՝ 10, 11, 19, 121, 187, 291 էջերի վրա: Բազմաթիվ վերջազարդեր, լուսանցազարդեր: Զարդագրեր (այրը, կարգով) Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Ը, Ծ, Ն, Ո, Ս, Թ: Հիշարառ շիա 41, 47, 533 էջերին: Շարվածքի շափը՝ 18×12 սմ:

Հշատարակություն — 11-րդ:

Բովանդակություն.— Եւսեբիոս Կարպիանոս Սիրելի եղբօր ի տէր ողջոյն: Կրատ վասն զանազանից թուց սրբոյ Աւետարանիս... Աւետարան ըստ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, Յոհաննու: Յիշատակարան սրբոյ Աւետարանիս տպեցման:

Հշատարակության պատմությունը.— Ավետարանը տպագրվել է Զաքարիա պատրիարքի Հրամանով: Գիրքը տպվել է Կ. Փոլսում, Աստվածատուրի տպարանում: Տպագրության աշխատանքը կատարել է Մատթեոս լրակը: Տպագրիչի և տպագրությանը օժանդակող անձնավորությունների մասին գրքի հիշատակարանում ասված է. «Արդ՝ որք հանդիպիք, յիշեցէք ի մաքուր յազօթս ձեր... Այլ և զտպագրիչն սորին զՄատթէոս նուաստ դպիրս (որ տպագրաւ իմուլ տպեցի). ընդ քենն իմոյ Բրաբիօն նոտարի և ընդ ձեռնասուն աշակերտի մերոյ գրաշար Մանուէլի, և ընդ մելանահար վանեցի Գասպարի...»¹:

¹ Մատթեոս գպիրը 1792 թվից մինչև 1794 թ. աշխատել է «Մայր գլուխուն» անունը կրող տպարանում, որպիս տպարանի անօրիններ նա, ըստ Բնողիկի, ույդ տպարանում տպագրում է 5 մետր դիրք, և առա նեռանում է ու գործում է առանձին: (Տիպ ու տառ, էջ 64), Մինչև իրեն սկիական տպարանի հիմնադրումը, որը գործել է 1800—1825 թթ. նա աշխատել է այլ տպարաններում: Առա այդ ժամանակաշրջանում նա Աստվածատուրի տպարանում տպագրել է այլ գիտարանը:

9.

(Հայերեն գրքերի հավաքածու № 12201)

Դիրք /Ա.ՂՕԹԻՑ, /Ասացեալ սրբոյն Եփրեմի/, խուրտոյն Ասորայի: /Տպագրեցեալ ի Հայրապետութեան Գեղագաւ Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Դանիէլի Սրբադան կաթուղիկոսի Ամենայն Հայոց: /Եւ ի Պատրիարքութեան Սրբոյն Երուապէմի/ Տեառն Թէոդորոսի երջանկափայլ վարդապետի: /Վեհափառ Հրամանաւ Մնձի: Արքայանիստ մայրաքաղաքիս: Կոստանդնուպոլիսի Սրբադան Պատրիարքի Տեառն Յօհաննու /Աստուածաբան կոշեցեալ վահմարան բարոնապետին: /Ի թուին Հայոց ՌՄԾԲ [1810] փետրվարի 9. /ի Տպարանի Յողոսին Պողոսի:

111 էջ, կաշեպատ ստվարաթղթե կազմ, 2 թ. հնագած թղթե պահպանակ $13 \times 5, 5 \times 1$ սմ չափի: Փորագրություն 2-րդ էջին: Նախազարդ 3-րդ էջին: Զարդագրեր 3, 61, 62, 74, 96, 98 էջերին: Վերջազարդ 60 էջին, հիշաբառ շի դրված 6, 11, 13, 14, 31, 32, 33, 35, 38, 40, 49, 50, 54, 62, 70 էջերին: Շարվածքի շափը 11×7 սմ:

Հատարակություն — 6-րդ:

Բովանդակություն.— Աղօթք զօրաւոր Սրբոյ հօրն Եփրեմի Խուրտոյն Ասորայի: Ճե [140] աղօթք, Նորին դարձեալ Աղօթք... առ Տէր Աստուած: Աղօթք յորժամ յորոգայթ անկանի ոք Ասացեալ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի: Ս. Աթանասի և Եփրեմի Խոստովանութիւն: Աղօթքներ Գրիգորի Նարեկացւոյ: Մաղթանք առ սուրբ Աստուածածինն: Զափածո քառյակներ, որոնք սկսվում են այրութենի տառերով:

Հատարակության պատմություն.— Գիրքը տպագրվել է Կոստանդնուպոլիսի պատրիարք տ. Յօհաննու հրամանով, Հովհաննիսյան Պողոսի տպարանում, որի մասին զրքի հիշատակարանի վերջին թերթի (էջ՝ 111) վրա կարդում ենք. «Արդ՝ ով բարեմիտ ընթերցողք սորին, ի հանդիպիլն ձեր սոյնոյ պրկանս յիշեսցիք ի Քրիստոս յոյսն մեր բնաւից, զՏիրացու Պողոսս՝ հանդերձ բարեշան և բազմաշխատ որդուվք իմովք տիրացու Աստուածատուրին և տիրացու Գէորգաւ զՄիմէօնին և զԴալուստին, որք շարեցին զգիրս կապարեայս...»:

ԱՎԵՏ ԶԵԹՈՒՄՅԱՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ ՏՊԱԳՐԱԼՈՒ ԳՐՔԵՐ

10.

(Հայերեն գրքերի հավաքածու № 22264)

ԺԱՄԱԳԻՐ /Համառոտ վասն/, ՄԱՆԿԱՆ/։ Հարիւր երեսուն և եօթի երարդի Հայրապետութեան/ Տեառն Եփրեմի ամենայն /կաթուղիկոսի: /Արդեամբ և ծախիւր յատուկ օդնական լինելոյ մեր /Ազնեից: /Աշխատասիրութեամբն Զընթում/ Աւետ Խօջիշանեան կոշեցելոյ: /ի Տպարանի Աւետ Զընթլումեանի: Յամի Տեառն... 1812 /ի Կալկաթա:

5, 3—384 էջ, ստվարաթղթե կազմով. $14 \times 8 \times 2$ սմ չափի: Փորագրություն 5-րդ էջին: Բազմաթիվ զարդադրեր: Կիսախորան 76, 143, 242, 304, 336 էջերին: Վերջազարդ 71, 129, 335, 364, 383 էջերին: Գրաշարազարդեր: Շարվածքի շափը 11×6 սմ:

Բոլվանդակուրյուն.—Կարդաւորութիւն հասարակաց ազօթից: Երգ Տեառն ներսէսի կաթողիկոսի: Քարոզներ: Սաղմոսներ: Մաղթանք սրբոյն Գրիգորի նարեկացւոյն: Աղօթք ներսէսի կաթողիկոսի: Շարական և այլն:

Օրինակի առանձնահատկուրյունը.—Գրքի տիտղոսաթերթին և 101 էջին Կալկաթայի գրադարանի կնիքը: Ակզրի և վերջի մի քանի թերթերը որդեգիներ:

Հրատարակուրյան պատմուրյունը.—Աւետ Զնթլումյանը գրքի հիշատակարանի մեջ (էջ՝ 2) տպագրության մասին հետևյալն է ասում. «... և ի թախանձմանէ բարեսէր արանցս այսոցիկ ազնուաց՝ զորոց անունքն զրոշմեալ եմ ի ներքոյ՝ տպեցի... ժամագիրքս ոչ որպէս յառաջն կայր որ տպագրեալ էր ի քաղաքին Կոստանդնուպոլսոյ, այլ այս վասն մանկանց, նաև եղի զԴանիէլն, և թուղթք սրբոյ Պողոսի Առաքելոյն... վասն զի ժամագիրքս այս վասն մանկանց ընթեռներոյ տպեցի սակա որոյ խնդրեսցեն... Տէր Յովսէփ Ստեփանոսեան... Յովսէփ էմինեան (թվում է 28 անուն), որոնք են յորդորողք և պատճառք տպեցման վերն յիշեցեալ գրոց...»:

Մանորբուրյուն.—Կալկաթայում 19-րդ դ. սկզբներին գործող հայ տպարանի վերատեսուշ Ավետ Զնթլումյանը այս գրքի հիշատակարանում իր տպարանի հիմնադրման մասին զրում է. «Օժանդակութեամբն հոգուն սրբոյ յանձըն առի անձամբ իմով զշարշարանս յանձին կրել՝ և հաստատել զտպարանս Հայոց՝ ի պարձանս Ազգիս իմոյ թէպէտ շարշարանս բազում լինելոյ՝ երբեմն սրտրշանայի, բայց պտուղն նորին տեսանելով ցնձայր սիրտն իմ, որոյ զշանս եռապատիկ լինիւր ոչ հայելով զշարշարանս, և զժախս սոյն գործարանիս՝ բրտնաթափ ջանիւր յետեսեալ լինէի՝ ոչ այլ ինչ երեկո առաջին աջաց իմոց՝ եթէ ոչ կատարումն տալ սոյն գործոյս, վասնորոյն նաև տպեցի զԱյրութենարանն՝ յետ այնու օժանդակութեամբն և ի թախանձմանէ բարեսէր արանցս այսոցիկ ազնուաց՝ զորոց անունքն զրոշմեալ եմ ի ներքոյ՝ տպեցի Ազգարան, Տարեկան Տօնացոյցն, Պատմութիւն Մերոյն Յոհաննու Ռոկերեանին, յուսկ յետո ժամագիրքս» (էջ՝ 2):

11.

(Հայերեն գրեւի հավաքածու № 3385)

Դիրք /ԱԱՂՄՈՍՍՅ ԴԱԻԹԻ/ ՈՐԴԻՈՅ ՅԵՍԱԵԱՅ /Հոմերական ոտիւք շափեալ ի Յարութիւնէ Սահակեան աղանուրեանց նոր /Զուղայեցոյ: /Ի տեսան ի պատիւ և ի վայելո մանկունց /սիրովնի սրբոյ եկեղեցւոյ: /Ի Հայրապետութեան տեսոն ծփրեմի սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց, որ ի լուսնկարն սուրբ էջմիածին: /Արդեամբք և Սախիւք օժանդակք լինողաց գործարանի: /Յամի կենարարին մերոյ 1815/ եւ ի թուականութեանս Հայոց 1264: /Ի Տպարանի Հընթլումեան Աւետի: /Ի ԿԱԼԿԱՐԱՅ:

Տիտղ. թ. 367—372, 1—366, 373—375 էջերը: 18×11×3 սմ շափի: Կիսախորաններ 1, 32, 40, 82, 129, 169, 212, 251, 293, 338 էջերին: Վերշազարդիք 21, 26, 39, 48, 117, 121, 250, 292, 366 էջերին: Զարդագրեր յուրաքանչյուր սաղմոսի նախասկզբին: Շարվածքի շափը 13×7 սմ:

Բովանդակուրյուն.—Յառաջարանութիւն: Առ մանկունս եկեղեցւոյս Հայաստանեայց: Բան առ ազնուական պարոն Սեթ Սեմեան խնդրող ոտանաւոր շափմամբ շարահիւսութեան սրբոյ մատենիս, Հոգինուագ սաղմոսացն:

Դաւթի: Գիրք սաղմոսաց Դաւթի: Նախագուշակ տեսառն մարդարէ... Մաղթանք: Երեք մանկունքն ի մէջ հնոցին: Երգս օրհնութեան սրբոյ կուսին: Երգս օրհնութեան երգեալ նորուն...: Աղօթքներ...: Յիշատակարան:

Հրատարակության պատմությունը.— Սաղմոսարանը հոմերական տաղաշափության է ենթարկել Հարություն Աղանուրյանը, Սեթ Սեմյանի խնդրանքով: Այս մասին գրքի առաջարանում ասված է (էջ՝ 368—370): «Արդ մի ոճն ի յազնուական բարեկամաց մերոց սիրելեաց աստուածայնոյն փափագողաց գորով միշտ տարփացող ընթերցանութեան հոգեարտուիս սաղմոսացն Դաւթի, խնդիր արար ի մէնչ զբոլոր սաղմոսն հոմերական տաղաշափութեամբ յօրինել... զի յարաժամ առ ինքն ունելով ընթերցմամբ նորին զմալիցի հոգեպէս... զպատճառն տաղաշափութեան սուրբ գրքոյս Ազնուամեծար բարեկամն իմ Պարոն Սեթայ Սեմյան»: Գրքի հիշատակարանի մէջ (էջ՝ 373) Ավետ Զնթլումյանը գրում է. «... աւարտեցաւ տպագրումն այս հոմերական տաղաշափութեամբ Սաղմոս Դաւթի, որ յօրինեալ էր քաջ ճոռմարան պ. Յարութիւն Սահակեանէ (Աղանուրեան) ի Պասրա քաղաքի յամին կենարարին մերոյ 1808: Իսկ այժմ տպագրեցաւ ի Կալկաթա քաղաքիս արդեամբ և ծախիւք զուարթամիտ և առատաձեռն աղջիս մերոյ»: Գիրքը տպագրվում է նորից հայ բարերարների օժանդակությամբ, որոնց (23 մարդու) աղջանունները տպագրիչը բերում է հիշատակարանի մէջ:

Օրինակի առանձնահատկությունը.— «Յառաջարանութիւնը» տպագրված է 367—372 էջերին, բայց կազմելու ժամանակ դրվել է էջագրությունից առաջ: Առաջարանի տեղը:

12.

(Հայերեն գրքերի հավաքածու № 3316)

Գիրք ՆՈՐ /ՈՐ կոչի/ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԲՈՒՐԱՍԱՆ: Հաւաքեալ ի Հին և նոր կտակարանէ: /Յորում աւանդին պատմութիւնը. սկսեալ 1921 ամօք յառաջ: Քանզ քրիստոսի. մինչև ցամ Տեառն 33: Եվ համառոտ բանք խրատական. ասացեալ ի Ժողովշղէ: /Յնսուայ. որդւոյ սիրաքայ: /ի Հայրապետութեան Տեառն Եփրեմ ամենայն հայոց կաթուղիկոսի /Յողնաշան աշխատասիրութեամբ Հաւաքեալ և ընծայեալ ի/ լոյս յարմարագրութեամբ ի Զընթլում Աւետեանէ: /բաժանեալ ի յերկուս հասորս/ Արդեամբք և Շախիւք նոյն Զընթլում Աւետի: /Հատոր Ա./ ի ԿԱԼԿԱԹԱՅՅ, յամի տեառն 1816 ի Տպարանի Աւետ Զընթլում մեանի:

Տիտղ. թ. 201 էջ, 22×14,5×2 սմ շափի: Մեկ զարդագիր առաջին էջի վրա: Շարվածքի շափը 14×9,5 սմ:

Յովկանդակություն.— Թարգմանական պատմութիւն հին և նոր կտակարանին, որ կոչի նորատունկ բուրաստան:

Հրատարակության առանձնահատկությունը.— Տպագրված է երկսյում, առաջին սյունակը հայերեն, երկրորդը, անգլերեն:

Տպագրության պատմությունը.— Ինչպես գրված է տիղոսաթերթի վրա, գիրքը լույս է ընծայել Զընթլում Աւետյանը իր միջոցներով:
«Յովկանդան աշխատասիրութեամբ հավաքեալ և ընծայեալ ի լոյս... ի Զընթլում Աւետեանէ»:

13.

(Հայերեն գրչերի հավաքածու № 12927)

Մեկնմիթին /երդ երգոց անուանեալ բանիցն Սաղոմօնի/: Հաւաքեալ և մեկնեալ ի ճակորայ վարդապետէ Կարնեցւոյ Սիմոնեան. ըստ մասին ի սուրբ Էջմիածին, և ըստ մասին և յարդրում, խրնդ/րանօք և յորդորմամբ Տեառն Արքահամու լիաշնորհ վարդապետի, /և մաքրակոն գերահոչակ առք եպիսկոպոսի, և վերատեսչի զմիւոնոյ մայրաքաղաքի, որոյ զինի հրաւիրեալ եղի ալցելու երկրին սիւնեաց՝ գերահոչակ վանացն Ստաթէի Առաքելոյն ուրանօք հան/գուցեալ եղաւ ի շիրմի ի ներքոյ խաչակուռ սեան պաւազանի/ նորին. և իմ յաջորդեալ ի նմանէ ի կենդանութեան իւրում: /Ե գերապայծառ Հայրապետութեան Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսի, և գերերջանիկ ծայրագոյն Պատրիարքի ամենայն Հայոց:/: Եւ ի Պատրիարքութեան սրբոյ Երուագէմի Տեառն Յովակիմայ քաղց/րաբարոյ վարդապետի և արհի եպիսկոպոսի: /... Ի թուականութեան Արամեանս տոհմի ի 1231: Ի սեպտեմբերի/ ամսոյ: /Եւ ի նարգենիս տպագրութեամբ ի լոյս ընծայեցաւ Շախիւք ուսումնասէր և բարեպաշտ մերազնեայ պատանեկաց:/: Հարիւր երեսուն և եօթներորդ ամի Հայրապետութեան Տեառն /Եփրեմի Սրբազնակատար կաթողիկոսի ամենայն Հայոց: /Եւ յԱռաջնորդութեան սրբոյ Ամենափրկչի Աթոռոյն մերոյ Տեառն/ Կարապետի Արք եպիսկոպոսի, որ ի նորն Զուղա: /Յամի Տեառն 1820/: Ի թուին Հայոց 1269: Ի Տպարանի երկոցունց եղբարց հարազատաց Աւէտիս Յովհաննէսի Զընթլում Ավետեանց: /Ի ԿԱԼԿԱԹԱՅ:

Տիտղ. թ. 1, Ժ. 377, 10 էջ. Կաշեպատ տախտակի կազմ: 6 թ. պահպանակ: 20×14×2,5 սմ շափի: Փորագրություն 1-ին էջին: Վերջազարդ Ժ. 377 էջերին: Զարդագիր 1-ին էջին: Էշախորապետ: Շարվածքի շափի 16×10 սմ:

Բովանդակություն.— Բան առ խոհեմամիտ և երկիւղած մերազնեայ ընթերցողս (Զնթլում Ավետյանի ստորագրությամբ): Մեկնութիւն մակադրութեան երդ երգոց անուանեալ բանիցն Սաղոմօնի: Ցանկ երդ երգոց անուանեալ բանիցն Սաղոմօնի: (Այրբենական կարգով):

Օրինակի առանձնահատկությունը.— Առաջին և վերջին էջերին կա վանի Հայկը, կետր. գարժ. կնիքը: Երկրորդ էջին խաչաձև շափածո բանաստեղծություն նվիրված գրքին:

Հասարակության պատմությունը.— Դիրքը գրել է Հակոբ վարդապետ Կարնեցին 1782 թվին: Այդ ձեռագիրը 38 տարի հետո Էջմիածնի միաբան Թումաս վարդապետը տարել է Հնդկաստան և 1820 թ. Կակաթալում տպադրվել է Ավետ և Հովհաննես Զնթլումյանների տպարանում: Այդ մասին Ավետ Զնթլումյանի նախարանի մեջ գրված է. «Առ սոյն վերագասի և հոգելից մատեանս այս մեկնութիւն երդ երգոց անուանեալ բանիցն Սողոմոնի, աշխատասիրեալ ի բանիրուն և բաշարան Տեառն Յակոբայ վարդապետի Սիմոնեան Կարնեցւոյ, ի միաբանութենէ մեծի... սրբոյ Էջմիածնի, զոր և երեսուն և ութ ամօք առաջ ի յօդուտ մանկանց եկեղեցւոյ արարեալ, իսկ ի նարգենիս ի զալ ի կողմանս Հնդկաց նոյնոյ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնայ... միաբան... Թօվմաս վարդապետին ունէր ընդ իւր զայս գիրք ի զրուանս ուսումնասիրութեան իւրում, զոր տեսեալ մերազնեայ ընթերցասէր պատանեկաց... և առեալ զնաշակ սորին քաղցրութեան, վառեալ բորբոքեցան... և ոչ արժան վարկան այսպիսի գանձ հոգեշահ... թողուլ ընդ գրուանան և ի խորշ մթութեան ծած-

կեալ... լև հանգանակաւ իմն գողցես զծախս տպեցման սորին ժողովեալ, հոտուն զպատուականս այս գործ տպեցմամբ ի լոյս ընծայել... զի պատուականութիւն սորին ամենեցուն քաջահայտ երևեցի...» (էջ՝ թ.):

Չեռագիր նիշատակագրություն գրքի վրա.— Գրքի ժ էջի վրա կա Բասրա քաղաքում 1840 թ. Սուրբիաս Վանանդեցու ձեռքով գրած մի համառոտ հիշատակագրություն գրքի նվիրաբերման վերաբերյալ:

III. ШАХНАЗАРЯН БИБЛИОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ Резюме

В этом сообщении описаны 13 старопечатных уникальных книг, оставшихся вне поля зрения армянских известных библиографов.

Эти книги разделены автором на три группы. В первую входят 5 книг, изданных в 1700—1838 гг. в разных городах и типографиях (Венеция, Константинополь, Шуши). Во вторую группу — 4 книги, напечатанные в Константинополе в 1699—1810 гг. в типографии известного печатника Махтеси Аствацатура, в дальнейшем его сына Ованеса и внука Погоса. В третью группу — 4 книги, напечатанные в 1811—1820 гг. в Калькутте (Индия), в типографии Авета Джентлумяна.

Этими данными дополняются сведения о деятельности некоторых армянских типографий и печатников XVIII—начала XIX вв.